

մէջ անուն առած տիկիներու մէկ արժանի յաջորդներէն մէկը կը նկատուի որովհետեւ իսկապէս ինքը ցոյց տուաւ խիզախութիւնը ամէնուրեք:

Հերոս Մարի Չիլիակիրեան նաեւ ասանդապահ Հաճընցի էր: Կը սիրէր յարգել մեր ասանդութիւնները: Ամէն անգամ որ հայրենակցական գծով աշխատանք կար՝ ինք հոն էր:

Կրթական գործիչ մը չէր. բայց՝ Հայ դպրոցին, Հայ կրթութեան յառաջդիմութեան համար իր կարելիին կ'ընէր ոչ միայն խօսքով այլ գործքով: Իր աջակցութիւնը բերած է Լիբանանի մէջ Սահակեան Լեւոն Մկրտիչեան դպրոցի պայծառացման, անոր նոր շէնքի շինութեան, շէնքի պահպանման, պիտճէի գորացման համար տարբեր աշխատանքներ տարած է ոչ միայն Լիբանանի մէջ այլ նաեւ Ամերիկայի այս հեռուոր ափերուն վրայ: Ամէն անգամ որ պէտք եղած էր Սահակեան Լիսէին աջակցելու, ձեռնարկ կազմակերպելու ինք եւ իր ընտանիքի անդամները անմիջականօրէն գործի լծուած են եւ քանի մը հոգիով յաջողացած մեծ ձեռնարկներ եւ հազարաւոր տղարներ դրկած են այստեղէն մինչեւ Լիբանան որպէսզի այդ պատերազմի դժնդակ օերուն Հայ մանուկը չգրկուէր իր այբեմօքիմէն: Մեզմէ քանի՞ հոգիներ այդպիսի նախաձեռնութիւններ ըրած են: Թերեւս մատի վրայ քիչեր կը համրուին: Բայց ինքը այս ափերուն մէջ գտնուելով հանդերձ, լեզուն չգիտնալով հանդերձ կրցաւ իր լաւագոյնը ընել:

Իբր կուսակցական, մեր մասնաճիւղերուն մէջ իր աշխոյժ մասնակցութիւնը բերած է անոնց հզօրացման համար: Այստեղ՝ Նորթ Հոլիվուտի եւ Վէլիի Հնչակեաններու հպարտ ենք նաեւ իրմով այն բանին համար որ ինքը՝ նախաձեռնողներէն եւ հիմնադիրներէն մէկը եղաւ Վէլիի շրջանի Ս.Գ.Հ.Կ. Սեդրակ Ծահէն մասնաճիւղի կազմութեան եւ դարձաւ նաեւ մասնաճիւղի առաջին վարչականներէն մէկը: Ան՝ ոչ միայն բարոյական աշխատանքով՝ այլ մասնաճիւղի հզօրացման համար առաջին նուիրատուներէն մէկը եղաւ, իր քսակը լայն բանալով մասնաճիւղի պայծառութեան համար:

1969 թուականը Հերոս Մարի Չիլիակիրեանի համար իսկական նշանակալից տարի մը եղաւ՝ զանազան պատճառներով: Ան ուխտի գնաց Մայր Հայրենիք եւ իր տարիներու երազը եղող մեր գեղ ծիծաղ հայրենի հողը ոտք կոխեց եւ համբուրեց: Հերոս Մարին իր ուխտը կատարեց նաեւ Ս. Էջմիածնի մէջ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ ստացաւ Հայրապետական ոսկեայ շքանշան առ ի գնահատութիւն քսանհինգ տարիներու իր եկեղեցանուէր աշխատանքներուն: Նմանապէս, 1969-ին էր որ Մարի Չիլիակիրեան Լիբանանի մէջ արժանացաւ Ս.Գ.Հ. Կուսակցութեան ոսկեայ շքանշանին: Ծբանշան մը որ Կուսակցութիւնը առաջին անգամ ըլլալով իրեն շնորհած է որպէս իգական սեռ: Ասիկա իսկապէս մեծ պատիւ մըն էր իր անձին շնորհուած:

Իր բնաւորութեան յատկանշական գիծերէն մէկը՝ զուարթամտութիւնն էր: Երբէք չէր սիրէր տխրիլ: Հերոս Մարին իր ծայտը փոխանցեց մեզի...: Ինք զուարթախօս եւ կատակասէր էր եւ երբեք չէր ուզեր յոռետեսութիւն տեսնել: Անմիջապէս որ յոռետես մը տեսնէր, մթնոլորտ կը ստեղծէր որպէսզի այդ յոռետեսը վերածուի լաւատեսի: Մենք յարգանքով կը խոնարհինք իր յիշատակին առջեւ եւ որպէս մեծագոյն ոսկէ շքանշան ինքը պիտի ըսէ թէ ես ունեցայ. այդ ալ եթէ երբեք տեսնէ որ մենք իր յաջորդները, հետեւին իր լաւ քայլերուն, որդեգրեն իր կեանքի այն գեղեցիկ գիծերը որ ինք որդեգրած էր՝ հայրենասէր, եկեղեցասէր, կառչած մնալ մեր ազգային ասանդութիւններուն եւ սրբութիւններուն եւ ըլլալ միշտ զուարթ, յանդուգն, խիզախ, եւ ամենակարեւորը քաջալերել այն բոլոր կազմակերպութիւնները եւ հաստատութիւններ որոնք՝ իրենց ճիգերը կը տանին ի պայծառութիւն մեր ազգին եւ հայապահպանման վսեմ գործին:

Գաբրիէլ Մոյոյեան
Լոս Անճելըս, Յունիս 1991

Հ Ե Ր Ո Ս Մ Ա Ր Ի Զ Ի Լ Ի Ն Կ Ի Ր Ե Ա Ն

1926-1991

Մարի 2օրվան հիշատակն ծնած է Պէյրուս 1926 թուականին. հայրը՝ Հերոս Ասատուր Մաչեան եւ մայրը՝ Իսկուհի Մաչեան: Աւանդապահ ընտանիքի շունչին տակ ան մեծցաւ որպէս տիպար հայուհի, կառչած՝ մեր ազգային սրբութիւններուն: Մարին ստացաւ իր հայեցի մաքուր դաստիարակութիւնը հայկական դպրոցներու մէջ, ինչպէս Նուպարեան, Սահակեան եւ ապա՝ Մէնթ Ֆամիլ: Իր ծնողքին շունչին տակ մեծցաւ եւ դարձաւ արժանի յաջորդը Հերոս հօր՝ անձ մը որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին եւ անկէ ետք՝ Հանճոյ հերոսական դիցազնամարտի օրերուն, կրցաւ քաջաբար կոռուի եւ ճնդքել թշնամիի շղթան, որպէս քաջ սուրհանդակ, հասցնելով լուրերը ուր որ պէտք է: Նման խիզախութիւն Հերոս Ասատուրի կողմէ մեծապէս գնահատուած է այդ ժամանակուան իր զինակիցներուն եւ ժողովուրդին կողմէ: Դիւրին է այստեղ անձի մը «հերոս» ըսել. բայց երբոր գտնուի՞նք իր պայմաններուն եւ պարագաներուն մէջ՝ այդ ժամանակ միայն կրնանք գնահատել թէ ինչպիսի հերոս անձ մըն էր Ասատուր Մաչեան:

Նուազ հերոսուհի մը չեղաւ նաեւ Մարին. ժողովուրդը կարծէք ինքնաբոյս կերպով իրեն տուաւ նաեւ այն մակդիրը ինչ որ տրուած էր իր հօրը. «Հերոս Մարի»: Թերեւս ձեզմէ շատեր կրնան թէ ինչ բանի մէջ կը կայանար այս կնոջ հերոսութիւնը: Իր հերոսութիւնը շատ բաներու մէջ կը կայանայ: Իր հայուհիի նկարագրի գեղեցիկ յատկանիշները այսպէս են: Նախ եւ առաջ որպէս տիպար կողակից, տիպար մայր եւ տիպար տանտիրին ոչ մէկ չափով չէ գիշած իր մայրական տնային պարտաւորութիւններէն, ամէն տեսակի հոգածութիւն լրիւ չափով ցոյց տուած է իր ամուսնոյն եւ զաւակներուն:

Այս բոլորի կողքին, հինգ զաւակներ ունենալէ ետք՝ տակաւին նետուիլ ազգային հասարակական գործունէութեան, տեսնել զինքը որպէս աստեղանկատուհի Ս.Գ.Հ.Կ. Շաքէ մասնաճիւղին երկար տարիներ, իմաստուն կերպով դէկավարելով իր մասնաճիւղի վարչութիւնը եւ իր ուսերուն դրուած հասարակական պարտաւորութիւնները: Մարին եղաւ նաեւ Պէյրուսի Ս. Գեորգ Եկեղեցւոյ Եկեղեցասէր Տիկնաց Վարչութեան աստեղանկատուհի, հոն եւս տասնեակ տարիներ ցոյց տալով աշխոյժ աջակցութիւն մեր եկեղեցւոյ վերելքին համար: Ինք միեւնոյն ժամանակ անդամ էր զանազան այլ կազմակերպութիւններու:

Հերոս Մարիի նկարագրի ամենագեղեցիկ և յատկանշական գիծերէն մէկը յանդգնութիւնն էր: Կին մըն էր ան խիզախ՝ բառին իսկական առումով: Խիզախներ շատ կան, բայց իր յանդգնութիւնը իսկապէս որ գերիվեր էր: Ես անձնապէս եւ ուրիշներ՝ կը գարմանան այդ յանդգնութեան վրայ: Այստեղ չեմ ուզեր տասնեակներով օրինակներ բերել իր ազգային, եկեղեցական, ընկերային, կուսակցական ու հասարակական հարուստ կեանքէն: Բայց կ'ուզեմ միայն երկու դրուագ նշել: Առաջինը՝ 1958 թուականին, երբ մենք երիտասարդ զինակից ընկեր մը հողին կը յանձնէինք, Պէյրուսի ազգային գերեզմանատան մէջ, բոլորը տիպար էին եւ կը հետեւէին դագաղին: Այդ ժամանակ Լիբանանի մէջ կը տիրէր քաղաքական շատ անբնականոն իրավիճակ. զինուորացիներ՝ ամէն տեղ կը հալածէր ժողովուրդը: Նոյն այդ գերեզմանատան մէջ անոնք՝ պաշարած էին յուղարկարները: Կը գարմանայինք թէ ինչու այդպէս է: Գիտէք

«...Հերոս Մարին արդարացուց այդ անունը եւ իր իսկական արի կեցուածքով կուրծք տուաւ այն բոլոր բարդ ու խրդին ընկերային հարցերուն որոնց լուծման գծով իր աջակցութիւնը բարձր գնահատանքի արժանի էր»:

ԱՐԱՐԱՏ

Վարդանանց պատերազմի ժամանակ Տիկնաց Փափկասունք հայոց աշխարհի: Թէ ինչպէս այդ Փափկասուն կոչուած տիկիները՝ իրենց պալատներէն դուրս գալով նետուեցան աշխատանքի: Հայոց բանակին համար հագուստներ կարեցին, երբ պէտք էր, իրենք ալ իջան բանակի զինուորականներուն հետ միասին պաշտպանելու համար Հայրենիքը ընդդէմ ոտխիւն եւ յանուն մեր Հայրենիքին եւ եկեղեցւոյ: Հերոս Մարին այդ Տիկնաց Փափկասունք Հայոց աշխարհի կոչուած, մեր պատմութեան

թէ այդ ժամանակ տղաք կային որոնք զինուած էին. Մէյ մըն ալ տեսանք այդ գերեզմանատան մէջ իրարանցում մը...: Հերոս Մարին էր: Ասդին անդին իրարանցում, Ի՞նչ կար: «Տղաք եթէ բան մը ունիք՝ տուէք, ես կրնամ պահել...»: Եւ իսկապէս այդ տղաքը կը վստահէին իրեն, գիտէին որ հերոսուհի էր, գիտէին որ իրեն տրուած պարտականութիւնը գլուխ կը հանէր. տղաքը ինչ որ պէտք էր տուին եւ ինք կրցաւ իր ուրոյն մեթոտներով պահել ինչ որ իրեն տրուած էր եւ այսպէսով երիտասարդները կրցան զինուորական այդ խիստ հսկողութեանէն խաղաղ օրէն դուրս գալ: Ասիկա՞ ամէն կին չի կրնար ընել:

Ուրիշ օր մը «Արարատ» օրաթերթի խմբագրատան մէջ նստած կը գրուցէինք, մէկ այլ կուսակցական մասնաճիւղի մը պատկանող ընկեր մը՝ ձեռքին տրցակ մը տոմսակներ, կը գանգատէր որ հանդէսի թուականը կը մօտենայ եւ ինք բաւական դժուարութիւններ ունի այդ տոմսակները ծախելու: Հերոս Մարին՝ հոն էր դարձեալ, «Այդ ինչ դժուարութիւն է եղեր». տրցակը առաւ եւ այդ պահուն խմբագրատան ու տպարանի բաժնին մէջ եւ դուրսէն այցելուներուն իսկոյն ծախեց տոմսակներուն մեծագոյն մասը տեղւոյն վրայ եւ մնացեալը ինծի ձգէ ըսաւ երկու օր ետքը ինձմէ դրամդ առ:

Ես տակաւին չեմ ուզեր նշել թէ ինչպէս ինքը կը քաջալերէր մեր մարզիկները մինչեւ մարզադաշտեր երթալով. թէ ինչպէս՝ մեր թաղերու պաշտպանութեան համար ոչ գիշերներուն անքուն հսկող մեր երիտասարդներուն կը մօտենար քրոջաբար անոնց տաք թէյ կը հրամսէր, կամ կերակուր կը բերէր. տղաք կը մսիք առէք խմեցէք. առէք կերէք կ'ըսէր, ձգելով պահ մը իր անձնական հանգիստը:

Ինքը բժշկուհի մը չէր, բայց կարծէք բուժքոյր մը որ բոլորին մօտ էր, ամէն վայրկեան, ամէն անգամ որ պէտքը կար: Քաղաքական մեծ գործիչ մը չէր, բայց քաղաքական ամենակարեւոր իրադարձութիւններուն հոն էր: Ուր որ Լիբանանի ինքնապաշտպանութեան համար կարեւոր ցոյց մը կար, համաժողովրդային, համահայկական կամ համալիբանանեան՝ առաջին գծի վրայ էր խիզախօրէն եւ անվախօրէն արհամարհելով ամէն տեսակի անտեղի միջամտութիւններ: Իսկական հերոսի զաւակ էր Հերոս Մարի 2օրվան հիշատակը:

Մենք զինք տեսանք նաեւ Հայ Եկեղեցիէն ներս: Եկեղեցին եւ Ս. Էջմիածինը պայծառացնելու գծով, ինք ամէն ճիգի գործ տարաւ՝ ըլլայ հանգստանկութեամբ, անձնական միջամտութեամբ կամ այցելութիւններով, ամէն տեղ ինք ներկայ էր եւ իր ծառայութիւնը բերաւ ի շահ մեր եկեղեցիին, ի շահ Ս. Էջմիածնի: Եւ հիմա իր հոգին կը հրճուի, որովհետեւ այդ եկեղեցիին ծառայողներէն մէկն է նաեւ իր զաւակը, որ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան համար: Ինք իսկական հայուհի մըն էր եւ մենք զինք կրնանք նմանցնել